

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 27-ի N 870 - Ա որոշման

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ՏՐԱՆՇ 4-Ի ՄԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4-ի Միսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման մանրամասն նախագծի (այսուհետ՝ նախագիծ) հատուկ համալիր փորձաքննություն անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի, 5-ի շրջանակներում վերակառուցվող ճանապարհահատվածների մանրամասն նախագծերի, ինչպես նաև ծրագիր 2-ի, 3-ի, 4-ի և 5-ի շրջանակներում վերակառուցվող ճանապարհահատվածների հատուկ համալիր փորձաքննություն անցած նախագծերի փոփոխված նախագծերի հատուկ համալիր փորձաքննություն անցկացնելու, ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N 508-Ա որոշմամբ ստեղծվել է ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

Ընդհանուր առմամբ տեղի է ունեցել հանձնաժողովի երկու նիստ՝ 14.12.2018 թ.-ին և 07.03.2019 թ.-ին:

Հանձնաժողովի եզրակացությունը կազմվել է նախագծի առանձին բաժինների վերաբերյալ՝ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի եզրակացության, ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացության, ինչպես նաև հանձնաժողովի կողմից կազմակերպված քննարկումների արդյունքների հիման վրա:

Նախագծի իրականացման համար հիմք են ընդունվել հետևյալ շինարարական նորմերն ու ստանդարտները՝

- ՀՀՇՆ IV–11.05.02-99 Ավտոմոբիլային ճանապարհներ
- EUROCODE եվրոպական ստանդարտներ
- ՀՀՇՆ II—6.02-2006 Սեյսմակայուն շինարարություն, նախագծման նորմեր
- AASHTO, Պետական մայրուղիների և տրանսպորտային պաշտոնյաների ամերիկյան

ասոցիացիա:

II. ՆԱԽԱԳԾԻ ԱՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1. «Շրջանակային ֆինանսավորման համաձայնագիր (Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր)», կնքված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2009 թվականի սեպտեմբերի 15-ին,

2. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3» վարկային համաձայնագիր (Վարկ թիվ 2993-ARM), կնքված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2014 թվականի մարտի 11-ին,

3. «Ժամանակի վրա հիմնված, միանվագ վճարման բաղադրիչով, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Տրանշ 3» խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ՕՅ-ՇՏ-001 պայմանագիրը՝ կնքված 2015 թվականի մարտի 30-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «Սպեա Ինջինիրինգ Ս.Պ.Ա. և Այ-Ար-Դի Ինջինիրինգ Ս.ր.Լ.» կազմակերպության միջև:

Նախագծի վերաբերյալ տրվել են հետևյալ փորձաքննությունների եզրակացությունները՝

1. Նախագծի, թունելների և նախահաշվի վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի դրական եզրակացությունները (27.07.2018 թ.-ի N 17/ՓՊ-225Փ, 30.07.2018 թ.-ի N 17/ՓՊ-227Փ և 03.08.2018 թ.-ի N17/ՓՊ-236Փ),

2. ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական եզրակացություն (16.03.2018 թ.-ի N ԲՓ 18):

III. ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Փորձաքննվող աշխատանքային նախագծի մշակմանը նախորդել են մանրամասն տեխնիկա-տնտեսական հետազոտություններ և հիմնավորումներ, որոնց ժամանակ նախանշվել են երեք հիմնական ուղղություններ, և կատարվել են ինչպես տեխնիկական, այնպես էլ նախնական արժեքային համեմատություններ, ինչի արդյունքում ընտրվեց առավել արդյունավետ տարբերակը՝ նոր ճանապարհահատված շուրջ 60 կմ ընդհանուր երկարությամբ:

Աշխատանքային նախագծում ներառված են ճանապարհի հատակագծի, երկայնական և լայնական պրոֆիլների, ճանապարհային հանգույցների, ջրթող խողովակների, հենապատերի, հողային պաստառի, ճանապարհային պատվածքների, արհեստական կառուցվածքների (կամուրջներ, ուղեանցներ, թունելներ, ջրթող խողովակներ, հենապատեր, անասնանցումներ), ճանապարհային լուսավորության և կահավորման նախագծային լուծումները:

Ինժեներա-երկրաբանական հետազոտությունները կատարվել են ակնադիտարկման և հորատանցքերի հորատման եղանակով: Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ճանապարհի հատվածի գոտու գրունտային շերտավորումները, հիդրոերկրաբանական պայմանները և լաբորատոր փորձարկումներով՝ գրունտների ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Ճանապարհահատվածի նախագծման համար ընդունվել է II տեխնիկական կարգը, հաշվարկային արագությունը 100կմ/ժ:

Երկայնական կտրվածքը նախագծված է ՀՀՇՆ IV–11.05.02-99 նորմատիվի պահանջների համապատասխան: Երկայնական կտրվածքի նիշերը կապված են պետական միկրոտեռանկյունավորման կետերի հետ:

Ճանապարհահատվածի հիմնական պարամետրերն են՝

- Ընդհանուր երկարությունը՝ 60 կմ
- Թունելների քանակը և ընդհանուր երկարությունը՝ 9 հատ, 12.94 կմ
- Կամուրջների քանակը և ընդհանուր երկարությունը՝ 27 հատ, 5.1 կմ
- Փոխհատումների քանակը՝ 3 հատ

- Երթևեկելի գոտիների քանակը և լայնությունը՝ 3x3,30 մ
- Հողային պաստառի լայնությունը, ներառյալ ճամփեզրերը՝ 15.6 մ
- Հորիզոնական կորերի նվազագույն շառավիղը՝ 425 մ
- Առավելագույն լայնական թեքությունը 6%
- Առավելագույն երկայնական թեքությունը 5%
- Ուղղաձիգ ուռուցիկ կորերի նվազագույն շառավիղը 8000 մ
- Ուղղահայաց գոգավոր նվազագույն շառավիղը 4500 մ:

Կառուցվող ճանապարհի պատվածքը ասֆալտաբետոնից է:

Ճանապարհի պատվացքի կառուցվածքն է՝

- Ա/բ-ի վերին շերտի հաստությունը՝ 50 մմ
- Ա/բ-ի ներքին շերտի հաստությունը՝ 70 մմ
- Կապակցող շերտի հաստությունը՝ 80 մմ
- Խճաքարային հիմքի հաստությունը՝ 300 մմ
- Ավազակոպճային ենթահիմքի հաստությունը՝ 100 մմ:

Կամուրջների կառուցման համար նախագծով նախատեսված է կիրառել երկու տիպի թռիչքային կառուցվածք՝ պողպատերկաթբետոնյա և նախալարված երկաթբետոնյա: Կառուցվող կամուրջները դասակարգված են հետևյալ կերպ՝

- Երկաթբետոնե կամուրջներ՝ թռիչքի 72 մ առավելագույն երկարությամբ
- Հավաքովի բետոնե կամուրջներ՝ թռիչքի 28 մ առավելագույն երկարությամբ:

Ճանապարհի երկայնքով նախատեսվում է կառուցել 104 բետոնե հենապատ՝ ընդհանուր 5000 մ երկարությամբ (բարձրությունը տատանվում է 1-ից մինչև 11 մ):

Նախագծով նախատեսված է կառուցել թվով 9 թունելներ՝

- Թունել 1՝ երկարությունը 515.5 մ
- Թունել 2՝ երկարությունը 717.5 մ
- Թունել 3՝ երկարությունը 532.0 մ
- Թունել 4՝ երկարությունը 8643.0 մ
- Թունել 5՝ երկարությունը 526.0 մ
- Թունել 6՝ երկարությունը 375.0 մ
- Թունել 7՝ երկարությունը 480.0 մ

- Թունել 8՝ երկարությունը 542.5 մ
- Թունել 9՝ երկարությունը 566.5 մ:

Նախագծով նախատեսված է շինարարությանը խոչընդոտ հանդիսացող հաղորդակցուղիների (ոռոգման և ջրամատակարարման համակարգեր, գազատարներ, էլեկտրամատակարարման համակարգեր) տեղափոխում և նորերի կառուցում: Բոլոր հաղորդակցուղիների նախագծերը համաձայնեցված են հաղորդակցուղիների սեփականատերերի և շահագործող կազմակերպությունների հետ:

IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, քննության առնելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման մանրամասն նախագիծը, կազմակերպել է աշխատանքային քննարկումներ, ինչպես նաև հանձնաժողովի երկու նիստ, որոնց արդյունքում փաստվեց, որ՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացուցչի կողմից ներկայացվել են որոշ հարցադրումներ: Հարցադրումներն ուղղվել են նախագծող կազմակերպությանը, որը տրամադրել է սպառիչ պարզաբանումներ:

- ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ներկայացուցչի կողմից ներկայացվել են որոշ հարցադրումներ: Հարցադրումներն ուղղվել են նախագծող կազմակերպությանը, որը տրամադրել է սպառիչ պարզաբանումներ:

- «Veolia Ջուր»-ի ներկայացուցչի կողմից ներկայացվել են որոշ հարցադրումներ: Հարցադրումներն ուղղվել են նախագծող կազմակերպությանը, որը տրամադրել է սպառիչ պարզաբանումներ:

- Նշված ճանապարհահատվածի ուղեգծին հարող տարածքներում հաղորդակցուղիների (ոռոգման և ջրամատակարարման համակարգեր, գազատարներ, էլեկտրամատակարարման համակարգեր) տեղափոխման աշխատանքները ներառված են նախագծային փաստաթղթերում:

- Իրականացվել է աշխատանքային հանդիպում ՀՀ Սյունիքի մարզպետարանում՝ ազդակիր մարզպետարանի ներկայացուցիչների և համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Նախագծման փուլում նախագծային լուծումները, ճանապարհային ենթակառուցվածքները և ճանապարհի ծրագիծը համաձայնեցված է ազդակիր համայնքների հետ:

Հիմք ընդունելով՝

ա) Նախագծի, թունելների և նախահաշվի վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի դրական եզրակացությունները (27.07.2018 թ.-ի N 17/ՓՊ-225Փ, 30.07.2018 թ.-ի N 17/ՓՊ-227Փ և 03.08.2018 թ.-ի N 17/ՓՊ-236Փ),

բ) ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական եզրակացությունը (16.03.2018 թ.-ի N ԲՓ 18),

գ) ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ 2017 թվականի մայիսի 19-ին ժամը 18:00-ին կայացած՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի, քաղաքային կայուն զարգացման ներդրումային և հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրերի կառավարման խորհրդի արձանագրություն N 23.1/[407568]-17 Սիսիան-Քաջարան (60 կմ) ճանապարհահատվածի մանրամասն նախագծին հավանություն տալու մասին.

հանձնաժողովը երաշխավորում է, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման մանրամասն նախագծային փաստաթղթերը նախագծողի տեխնիկական առաջադրանքի շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին պահանջներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ